



ՈՐՈՇՈՒՄ N 10

19 հունիսի 2015 թվականի

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
2015 ԹՎԱԿԱՆԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԴԴԻՏ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ
ԱՆՁԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Դեկլարվելով «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 13-րդ և 39-րդ հոդվածի 3-րդ կետերով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.4 կետի 16-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի հոգաբարձուների խորհուրդը որոշում է.

Հաստատել «ԹՄ Աուդիտ» ՓԲԸ-ին՝ որպես աուդիտ իրականացնող անձ, և սահմանել աուդիտ իրականացնող անձի հետևյալ գործառույթները.

- 1) «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2015 թվականի համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի իրականացում և անկախ աուդիտորական եզրակացության ներկայացում:
- 2) «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի եկամուտների ու ծախսերի 2015 թվականի տարեկան նախահաշվի և դրա փոփոխությունների կատարողական հաշվետվության աուդիտի իրականացում և անկախ աուդիտորական եզրակացության ներկայացում:

Հոգաբարձուների խորհրդի նախագահ՝

Ս. Սարգսյան